

**ԵՐԿՐԱՅԻՆ ԷԼԻՊՍՈՒԴ**, Երկրի ձևը (գեոիդը) լավագույնս ներկայացնող պտտման էլիպսոիդ: Ե. է. որոշվում է այնպես, որ 1. նրա և գեոիդի ծավալները լինեն հավասար: 2. Հասարակածի հարթությունը համընկնի Երկրի հասարակածի հարթությանը, իսկ փոքր առանցքը՝ Երկրի պտըտման առանցքին: 3. Ե. է-ի և գեոիդի չափերի տարբերությունների քառակուսիների գումարը լինի ամենափոքրը: Երկրի մակերևույթի այս կամ այն մարզի սահմաններում գեոիդի ձևը լավագույն կերպով ներկայացնելու համար կիրառում են ամենից հարմար Ե. է. և այն որոշում երկրորդ ու երրորդ պայմաններով: Գեոդեզիայի և քարտեզագրության մեջ բոլոր չափումները, որ կատարվում են Երկրի մակերևույթի վրա, վերաբերում են Ե. է-ին, որի վրա հարմար է լուծել բոլոր մաթ. խնդիրները: ՍՍՀՄ-ում ընդունված է Կրասովսկու էլիպսոիդը:

**ԵՐԿՐԱՅԻՆ ՍՖԵՐՈՒԴ** (< հուն. σφαιρα— գունդ և εἶδος— տեսք), գեոիդի ձևը պատկերող երկրաչափական մարմին. գնդից տարբերվում է բևեռների ուղղությամբ նկատվող աննշան սեղմվածությամբ: Պարզագույն դեպքում Ե. ս. անփոփոխ առանցքի շուրջը հաստատուն անկյունային արագությամբ պտտվող համասեռ հեղուկ զանգվածի հավասարակշռության պատկերն է և համընկնում է պտտման էլիպսոիդին: Գեոդեզիական խնդիրների լուծման ժամանակ Ե. ս. սովորաբար փոխարինվում է համապատասխան պտտման էլիպսոիդով (դրանք իրարից քիչ են տարբերվում):